ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հունվարի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բուլղարիայի Հանրապետության կրթության և գիտության նախարար պրոֆ. Իգոր Դամյանովի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ կրթության և գիտության նախարար Ս. Երիցյանի ուղեկցությամբ:

Ողջունելով երկու բարեկամ երկրների կրթության և գիտության նախարարների այցը Հայ Եկեղեցու հոգևոր կենտրոն՝ Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակությամբ արձանագրեց երկու երկրների միջև հարաբերությունների զարգացումը, որոնք տարեցտարի նոր ծավալ են ստանում՝ լինելով բնական արտահայտությունը երկու քրիստոնյա ժողովուրդների դարավոր բարեկամության: Այդ առիթով Նորին Սրբությունն իր բարեմաղթանքներն ուղղեց երկու նախարարներին՝ ցանկանալով, որ համագործակցությունը լինի արգասաբեր և բարիքներ պարգևի երկու ժողովուրդներին:

Վեհափառ Հայրապետը նախարարի միջոցով իր շնորհակալությունը հայտնեց նաև Բուլղարիայի իշխանություններին իրենց հոգատար վերաբերմունքի համար Բուլղարիայում ապրող հայ ժողովրդի զավակների նկատմամբ:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Բուլղարիայի կրթության և գիտության նախարարը ներկայացրեց երկօրյա աշխատանքների արդյունքները՝ կարևորելով այս համագործակցությունը և փորձի փոխանակումը:

Խոսելով այս տարի նշվող Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի մասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց, որ բուլղար ժողովուրդը, որ ժամանակին ևս վերապրել է յաթաղանի հարվածները, դատապարտի հայ ժողովրդի դեմ կատարվածը:

Նորին Սրբությունն իր ողջույնները փոխանցեց նաև Մաքսիմ Պատրիարքին՝ հայցելով Երկնավորին, որ զորացնի և բարգավաճման մեջ ծաղկում պարգևի Բուլղար Ուղղափառ Եկեղեցուն:

Հանդիպմանը ներկա էր ՀՀ-ում Բուլղարիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ստեֆան Դիմիտրովը: